«ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ՄԱԳԻՍՏՐՈՍԻ

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակ 1

	1 Մշտադիտարկման խմբի կազմը /անուն, ազգանուն, պաշտոն կամ կուրս/	
Ղեկավար	1	Վ. Գեղամյան, հ.գ.թ, դոցենտ, ամբիոնի վարիչ
ՊԴ կազմից անդամներ	2	Հ. Բաբայան, հ.գ.թ, ամբիոնի պրոֆեսոր
	3	Ա. Ստեփանյան, հ.գ.թ, ամբիոնի դոցենտ
Ուսանող անդամներ	4	Գ. Հովսեփյան, մագիստրանտ
	5	Ա. Աթանյան, մագիստրանտ
Արտաքին շահակից	6	<<Հայաստանի հոգեբանների միություն>> մասնագիտական ՀԿ
	7	<<Տորք Անգեղ>> մարզամշակութային կենտրոն

Աղյուսակ 2

2. Մշտադիտարկվող կրթական ծրագիրը /Կրթական ծրագրի անվանում և մասնագիտության դասիչը/	
Ուսուցման ձևը /առկա, հեռակա/	<<Հոգեբանություն>> 031301.007 առկա ուսուցման մագիստրոսի կրթական ծրագիր
Շնորհվող որակավորումը	Հոգեբանության մագիստրոս
Ծրագրի մեկնարկային տարին	2016
Ծրագրի նախորդ մշտադիտարկման ամսաթիվ /առկայության դեպքում/	-
Ծրագրի նախորդ վերանայման ամսաթիվը	2020

Աղյուսակ 3

3. Նախորդ մշտադիտարկման արդյունքներով ծրագրի բարելավմանն ուղղված միջոցառումների պլանի կատարողականը			
	Միջոցառում /գործողություն/	**Կատարողականը**	**Ժամկետը**
	-	-	-

Աղյուսակ 4

4 .Ծրագրի քանակական ցուցանիշները			
Ուսումնական տարի	2021–2022	2022–2023	2023-2024
Ընդունելությունը և ուսանողական համակազմը			
Դիմորդների թիվը	9	4	7

Ընդունելության մրցութային ցուցանիշը	Հարցազրույց	Հարցազրույց	Հարցազրույց
Անցողիկ շեմային միավորը	60	60	60
Ընդունված ուսանողների թվաքանակը	9	4	7
Ընդունելության միջին միավորը	91,4	88	86,2
Հաճախումները (%)	95	95	100
Բացակայությունների հնարավոր պատճառները	Մասնագիտական գործունեություն /մարզումներ, մրցումներ/	Մասնագիտական գործունեություն /մարզումներ, մրցումներ/	-
Ուսումնական առաջադիմության ցուցանիշները			
«Գրազանց», «լավ» և «բավարար» գնահատականների բաշխումն ըստ ուսանողների թվի (%-ով)	Գերազանց- 90 Լավ-10 Բավարար-0 Անբավարար-0	Գերազանց- 37,5 Լավ-62,5 Բավարար-0 Անբավարար-0	Գերազանց- 91,5 Լավ-8,5 Բավարար-0 Անբավարար-0
Ծրագրում ընդգրկված ուսանողների հանրագումարային միջին որակական գնահատականը (ՄՈԳ)	96,4	88,5	96
Ուսանողների ներքին շարժունություն	-	-	-
Ուսանողների արտաքին շարժունություն	-	-	-
Սահմանափակ կարողություններով ուսանողների ներգրավվածություն	-	-	-
Հեռացված մագիստրանտների թիվը պատճառներով	4-ը իրենց դիմումի համաձայն հրաժարվել են ուսումնական գործընթացից	-	1-ը չի շարունակել ուսումը
Ուսուցման իրավունքը վերականգնած ուսանողների թիվը	-	-	-
Ներքին և արտաքին շահակիցների հետ անցկացված հարցումները *(տես՝ Որակի ապահովման բաժնի հաշվետվություններում)*			

Ուսանողների կողմից պրակտիկայի գնահատման արդյունքներ	-	-	-
Ուսանողների կողմից դասախոսների գնահատման արդյունքներ	-	-	-
Ուսանողների կողմից ուսումնաօժանդակ ռեսուրսների գնահատման արդյունքներ	-	-	-
Ուսանողների կողմից կրթական և լրացուցիչ խորհրդատվությունների գնահատման արդյունքներ	-	-	-
Շրջանավարտների բավարարվածության հարցումների արդյունքները	-	-	-
Գործատուների կողմից շրջանավարտների մասնագիտական կարողությունների գնահատման արդյունքներ	-	-	-
Տվյալներ ծրագրի շրջանավարտների վերաբերյալ			
Շրջանավարտների թիվը	5	4	6
Ամփոփիչ ատեստավորման արդյունքներով «գերազանց», «լավ» և «բավարար» գնահատականներ ստացածների բաշխումը (%-ով)	Գերազանց- 100 Լավ-0 Բավարար-0 Անբավարար-0	Գերազանց- 100 Լավ-0 Բավարար-0 Անբավարար-0	Գերազանց- 100 Լավ-0 Բավարար-0 Անբավարար-0
Հաջորդ կրթական մակարդակում ուսումը շարունակող ուսանողների մասնաբաժինը	1 /ասպիրանտ/	-	1 /հայցորդ/

Մասնագիտական զբաղվածության ցուցանիշը (%-ով)	40	50	50
Ոչ մասնագիտական զբաղվածության ցուցանիշը (%-ով)	60	50	50

Աղյուսակ 5

	Բարելավման ոլորտը/ առարկան	Պլանավորված միջոցառումը/գործողությունը	Կատարման ժամկետը
1.	«Հոգեբանություն» մագիստրոսական կրթական ծրագրով սովորողների ընդունելության տեղերը խիստ սահմանափակ է /5 վճարովի և 2 անվճար տեղեր/, ինչը հետագայում կարող է առաջ բերել սպորտի հոգեբանի մասնագիտության պահանջարկի ապահովման պակասի: Ներկա պայմաններում փաստերը վկայում են, որ ազգային հավաքական թիմերում, մարզադպրոցներում, ֆեդերացիաներում սպորտի հոգեբանի պահանջարկն օրեցօր մեծանում է:	Սպորտի հոգեբանության մասնագիտության պրոպագանդում	2024-2025 ուս. տարի
		Ընդունելության հատկացվող տեղերի ավելացման նպատակով համապատասխան մարմիններին դիմումի ներկայացում	2025-2026 ուս. տարի

1. ՄԿԾ մշտադիտարկման ինքնավերլուծություն՝ ըստ չափանիշների և չափորոշիչների

Չափանիշ 1. Կրթական ծրագրի բովանդակությունը և իրականացումը

Չափորոշիչ 1.1 Կրթական ծրագրի շրջանակում կիրառվող ուսումնառության և գնահատման մեթոդները նպաստում են ուսանողակենտրոն ուսուցմանը:

1.1.1 ԿԾ-ի իրականացման համար առկա է մասնագիտական որակավորում և հմտություններ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմ /տես Աղյուսակ 6/: Կրթական ծրագիրն իրականացնող պրոֆեսորադասախոսական կազմը համալրված է ոլորտի առաջադեմ մասնագետներով, ովքեր ունեն գիտական կոչումներ և աստիճաններ, ֆ.կ. և սպորտային գործունեության մեջ հոգեբանական գիտության ներդրման գիտագործնական մեծ փորձ, հրատարակած բազմաթիվ գիտական հոդվածներ, ուսումնամեթոդական ձեռնարկներ, մենագրություններ, հոգեբանական սպասարկում են իրականացնում ՀՀ հավաքական թիմերի տարբեր մարզաձևերի մարզիկների հետ, ինչպես նաև կազմակերպում են սպորտային հոգեբանության շրջանակներում վերապատրաստման դասընթացներ:
1.1.2 Բակալավրի/մագիստրոսի/լրացուցիչ կրթական ծրագրի վերջնարդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդները նպաստում են ուսանողակենտրոն և որակյալ ուսուցմանը: Մեթոդների շարքում ընդգրկված են ոչ միայն դասախոսություններ, գործնական, սեմինարներ, ինքնուրույն անհատական աշխատանքներ, այլև լաբորատոր պարապմունքներ, հետազոտություններ, խորհրդատվություններ, հոգեբանական թրեյնինգներ, բարձր որակավորման մարզիկների մրցակցային տարբեր իրավիճակների հոգեբանական վերլուծություններ, որոնք լրացուցիչ գործոն են հանդիսանում ծրագրի վերջնարդյունքների արդյունավետ իրականացմանն ու ուսանողակենտրոն ուսուցմանը: Կիրառվում են նաև լաբորատոր սարքավորումներ, համակարգչային հատուկ ծրագրեր, տեսաձայնագրություններ, ինչպես նաև մարզիկների հոգեբանական ապահովման տարբեր գործառույթներ /հոգեբանական օգնություն, վերահսկում, աջակցություն, հոգեկարգավորում և այլն/: Կիրառվող մոտեցումները միտված են նաև ուսանողակենտրոն ուսումնառությանը՝ նպաստելով ուսանողի անհատական, սոցիալական, ընդհանուր կուլտուրական, մտավոր, միջանձնային փոխհարաբերությունների զարգացմանը, բարձրացնում են մասնագիտական գիտելիքները գործնականում ներդնելու կարողություններն ու հնարավորություն են ստեղծում հասնել կրթական ծրագրի սահմանված վերջնարդյունքներին:
1.1.3 Ուսումնառության ակնկալվող արդյունքները հստակ արտացոլում են շահակիցների պահանջները: Ծրագրի հիմքում ընկած է շահակիցների /մարզիչներ, բարձրակարգ մարզիկներ, մարզական ֆեդերացիաներ և այլն/՝ սպորտի հոգեբանի մասնագիտական կոմպետենցիաների պահանջների բավարարումը, որը հիմնականում իրականացվում է մասնագիտական պրակտիկայի ընթացքում և ծրագրում ընդգրկված մի շարք առարկաների շնորհիվ /<<Հոգեբանական ապահովումը սպորտում>>, <<Հոգեթերապիան սպորտում>> և այլն/:
1.1.4 ԿԾ-ի շրջանակում կիրառվում է ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման, ուսուցման և գնահատման համակարգ, որը հասանելի է ուսանողներին: Գնահատման մեթոդները համապատասխանում են դասավանդման, ուսուցման և գնահատման պահանջվող համակարգին /ինքնուրույն աշխատանքի գրավոր ստուգում, սեմինարների և գործնականների ընթացքում գիտելիքների և կարողությունների ստուգում/: Ծրագրի իրականացման գործընթացում կիրառվում է համակարգչային տեխնոլոգիաներ՝ classroom,

kahoot, ինչպես նաև հոգեախտորոշման և հոգեկարգավորման գերժամանակակից սարքավորումներ /Rehacor-T, Egoscop/:
1.1.5 ԿԾ-ի շրջանակում առկա են գնահատման համակարգի բարելավման մեխանիզմներ: Գնահատման համակարգի բարելավման չափանիշների մեջ ընդգրկված են՝ ոչ միայն գիտելիքների իմացության, խնդիրների ինքնուրույն վերլուծության գնահատումն ու բանավոր հարցման, սեմինարի գնահատման ռուբրիկները, այլև հոգեբանության ախտորոշիչ մեթոդիկաների տիրապետման և հոգեբանական խորհրդատվության իրականացման կարողության գնահատումը:
1.1.6 ԿԾ-ի շրջանակում խրախուսվում է ուսանողի ստեղծագործական ինքնուրույնությունը և պայքարը գրագողության դեմ: Ծրագրում ընդգրկված մի շարք առարկաների /<<Փորձարարական հոգեբանություն>>, <<Գիտական սեմինար>>, <<Հոգեթերապիան սպորտում>> և այլն/ գործնական դասեր և մեթոդներ, որոնք միտված են մագիստրանտի ստեղծագործական ինքնուրույնության զարգացմանը: Սովորողների շրջանում իրականացվում է քննարկումներ և ուսուցողական զրույցներ գրագողության և ակադեմիական ազնվության պահպանման դեմ:
1.1.7 ԿԾ-ի շրջանակում առկա է սահմանափակ կարողություններով ուսանողների ուսուցման և գնահատման համակարգ: Նախադեպը չլինելու պատճառով ԿԾ-ի շրջանակում բացակայում է սահմանափակ կարողություններով մագիստրանտների ուսուցման և գնահատման համակարգը, որը պլանավորվում է առաջիկայում մշակել և ընդգրկել ԿԾ-ում:

Աղյուսակ 6

1.1 8 Տվյալներ պրոֆեսորադասախոսական կազմի վերաբերյալ						
Անուն, ազգանուն	Տարիք	Կրթություն, Որակավո–րում	Մանկավար-ժական ստաժ	Մարզչա–կան ստաժ	Պրակտիկ ոլորտ	Գիտական աստիճան, կոչում
Վ. Գեղամյան	42	ՀՖԿՍՊԻ, մարզիչ-մանկավարժ	18	20	Մարզիկների հոգեբանական սպասարկում	Հ.գ.թ., դոցենտ
Հ. Բաբայան	73	ՀՖԿՍՊԻ, մարզիչ-մանկավարժ	48	-	Մարզիկների հոգեբանական սպասարկում	Հ.գ.թ., պրոֆեսոր
Ա. Ստեփանյան	60	ՀՊՄՀ Մանկավարժություն-հոգեբանություն	21	-	Մարզիկների հոգեբանական սպասարկում	Հ.գ.թ., դոցենտ
Ն. Գևորգյան	55	ՀՊՄՀ Մանկավարժություն և տարրական ուսուցման մեթոդիկա	33	-	Մարզիկների հոգեբանական սպասարկում	Հ.գ.թ., դոցենտ
Թ. Սոֆյան	63	ՀՖԿՍՊԻ, մարզիչ-մանկավարժ	34	4	Մարզիկների հոգեբանական սպասարկում	Դոցենտ
Ա. Չատինյան	64	ՀՖԿՍՊԻ, մարզիչ-մանկավարժ	45	-	Սպորտային մանկավարժու-թյուն	Մ.գ.դ., պրոֆեսոր

Ա. Դավթյան	34	ՀՖԿՍՊԻ, մարզիչ-մանկավարժ	13	-	Սպորտային մանկավարժու-թյուն	Մ.գ.թ., դոցենտ
Ե. Հակոբյան	63	ՀՖԿՍՊԻ, մարզիչ-մանկավարժ	36	-	Սպորտային մարզման տեսություն	Մ.գ.դ., պրոֆեսոր
Լ. Մեծոյան	56	ԵՊՀ, մաթեմատիկոս, ծրագրավորող	29	-	Սպորտային վիճակագրություն	-
Ա. Հարությունյան	61	ՀՖԿՍՊԻ, մարզիչ-մանկավարժ	40 տարի	1 տարի	-	Կ. գ. .թ, Պրոֆեսոր Ակադեմիկոս
Գ. Սահակյան	58	Բրյուսովի անվան պետական համալսարան Ռուսաց լեզու, անգլերեն և գրականություն	30	-	-	-

Չափանիշ 2. Կրթական ծրագրի ռեսուրսային ապահովվածությունը

Չափորոշիչ 2.1 Կրթական ծրագրի արդյունավետ իրականացման համար առկա են անհրաժեշտ ռեսուրսներ ՄԿԾ իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներ

2.1.1 Կրթական ծրագրի արդյունավետ իրականացման համար ապահովված են անհրաժեշտ ռեսուրսներ, կրթական գործնական միջավայր: Ծրագրի իրականացման համար առկա են ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներով հագեցած դասախոսությունների լսարաններ, էլեկտրոնային գրադարան, հոգեբանության փորձարարական լաբորատորիա՝ հագեցած տարբեր սարքավորումներով: Մագիստրանտները նաև պարբերաբար գիտահետազոտական գործունեություն են ծավալում ինստիտուտի «Սպորտ ԿԱԲ» գիտահետազոտական կենտրոնում, որը հագեցած է հոգեֆիզիոլոգիական թեստավորման գերժամանակակից սարքավորումներով:
2.1.2 Կրթական ծրագրի շրջանակում առկա է ուսումնամեթոդական անհրաժեշտ բազա: Ծրագրի իրականացումն ապահովված է յուրաքանչյուր առարկայի համար նախատեսված ուսումնամեթոդական ձեռնարկներով, մեթոդական ուղեցույցներով, հասանելի գրադարանային ֆոնդով և տվյալների բազայով, տեսալսողական ցուցադրական նյութերով և նմանատիպ այլ ուսումնաօժանդակ նյութերերով: Ուսումնական գործընթացում կիրառվում են նաև սպորտի հոգեբանության ժամանակակից կիրառական սկզբունքներին համապատասխան ժամանակակից լաբորատոր-գործիքային և ոչ գործիքային մեթոդներ:
2.1.3 ՄԿԾ շրջանակում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ: Ամբիոնը ակտիվորեն համագործակցում է ինստիտուտի կարիերայի բաժնի և արտաքին շահակից ընկերությունների /մարզական ֆեդերացիաներ, մարզադպրոցներ/ հետ: Սահմանափակ են մագիստրանտի կարիերային նպաստող ծառայությունները /պետական ծրագրով նախատեսված մարզիկների հոգեբանական սպասարկման խմբեր/ և կարիք կա այն ընդլայնելու և սովորողներին ուղղորդելու հոգեբանական խորհրդատվություն իրականացնող կենտրոններ:

2.1.4 Ուսանողներին տրամադրվում է խորհրդատվական աջակցություն՝ ներգրավվելու բուհի գիտահետազոտական աշխատանքներում: Յուրաքանչյուր մագիստրանտ ընդգրկված է ամբիոնի գիտահետազոտական թեմայի շրջանակում իրականացվող գիտահետազոտական աշխատանքներում, իսկ առավել ակտիվները մասնակցում են բուհում գիտահետազոտական տարբեր ծրագրերի իրականացման գործընթացներին:

Չափանիշ 3. Կրթական ծրագրի շրջանակում իրականացվող գիտահետազոտական գործունեությունը

Չափորոշիչ 3.1 Կրթական ծրագիրը նպաստում է գիտահետազոտական գործունեության զարգացմանը

3.1.1 ԿԾ-ում առկա են դասավանդվող բոլոր առարկաների նկարագրերը, դասընթացների ծրագրերը, որոնք համապատասխանում են ԿԾ-ում սահմանված վերջնարդյունքներին: Թեև ծրագրում առկա դասավանդվող առարկաներն իրականացնում են ԿԾ-ում սահմանված վերջնարդյունքները, սակայն պայմանավորված լինելով վերջին տարիների սոցիալ-տնտեսական, աշխարհաքաղաքական և նմանատիպ այլ իրավիճակներով հրատապ է դարձել որոշ առարկաների ներդնումը ԿԾ՝ /<<Սպորտի կիրառական հոգեբանություն>>, <<Արտակարգ իրավիճակների հոգեբանություն>>, <<Ադապտիվ սպորտի հոգեբանություն>> և այլն/:
3.1.2 Դասախոսական կազմի հետազոտական արդյունքները ներդրվում են ուսումնական գործընթացում: ԿԾ-ում դասավանդվող գրեթե բոլոր առարկաներում ընդգրկված են դասախոսական կազմի անհատական հետազատական արդյունքները ուսումնամեթոդական ձեռնարկների, մենագրությունների, դասախոսության և սահիկաշարերի միջոցով, ինչպես նաև լաբորատոր-հետազոտական աշխատանքներում:
3.1.3 Կրթական ծրագիրը նպաստում է գիտահետազոտական գործունեության զարգացմանը, առկա են ուսումնառության նորարարական մոտեցումների ներդրման արդյունքում լրամշակված առարկայական ծրագրեր: ԿԾ-ում գիտահետազոտական գործունեության զարգացման նպատակով <<Փորձարարական հոգեբանություն>> առարկայի շրջանակներում ներ են դրվել հոգեբանության ժամանակակից գիտահետազոտական գործիքային <<Հոգեախտորոշիչ բազմագործոն սարք>>-ի մոդիֆիկացված տարբերակը, համակարգչային <<ЭГОСКОП>> և <<РЕАКОР-Т>> հոգեբանական համալիր հետազոտությունների համակարգչային ծրագրերն ու ոչ գործիքային մեթոդների փաթեթներ:
3.1.4 Կրթական ծրագիրը նպաստում է հետազոտությունների զարգացմանն ու նորարարություններին: Կրթական ծրագիրը նպաստում է ինքնուրույն կիրառել ոչ միայն հոգեբանության ոլորտի նորարարական տեխնոլոգիաները, այլև իրականացնել հոգեբանական գիտահետազոտական աշխատանքներ սպորտային գործունեության, ֆիզիկական դաստիարակության, արտակարգ իրավիճակների, առողջարարական և զանգվածային սպորտի ոլորտներում:
3.1.5 ԿԾ-ի շրջանակում կարևորվում է հետազոտական գործունեության միջազգայնացումը: Դեռևս այն թերի է և կարիք ունի հետագա խորացման:

Աղյուսակ 7

3·6 Կրթական ծրագիրը սպասարկող պրոֆեսորադասախոսական կազմի հրատարակած (ինչպես նաև՝ հրատարակության ընթացքում գտնվող) գիտական աշխատությունների (այդ թվում՝ գիտական հոդվածներ, մենագրություններ, ժողովածուներ, դասագրքեր, ուսումնական և մեթոդական ձեռնարկներ)					
Հեղինակ (անուն, ազգանուն)	Մենագրության անվանում	Ուսումնամեթոդական ձեռ-նարկներ, մենագրություններ, գիտական հոդվածներ	Հրատարակ-չություն	Տպագրման տարեթիվ	Էջերի քանակ
Հ. Բաբայան	Հոգեբանական պատրաստության հիմնախնդիրները բարձր նվաճումների սպորտում	ՈՒսումնական ձեռնարկ	Եր.: Հեղ. Հրատ.	2007	121
	Հոգեբանության գիտահետազոտական մեթոդները սպորտում	ՈՒսումնամեթոդական ձեռնարկ	Եր.: Հեղ. հրատ.	2016	236
	«Հավակնության աստիճանը, որպես բարձրակարգ որակավորման ծանրորդների մրցակցային բարձր արդյունքի ցուցադրման հոգեկան պատրաստականության անձնային ցուցանիշ»	Գիտակիան հոդված		2024	8
Վ. Գեղամյան	Հոգեկան վիճակները սպորտում	Մենագրություն	Եր.: Հեղ. հրատ.	2021	89
	Սպորտային պատրաստության հոգեբանական առանձնահատկություններն ըմբշամարտում	ՈՒսումնամեթոդական ձեռնարկ	Եր.: Հեղ. հրատ.	2018	124
	Հոգեբանության գիտահետազոտական մեթոդները սպորտում	ՈՒսումնամեթոդական ձեռնարկ	Եր.: Հեղ. հրատ.	2016	236
	Մարզչի գործունեության արդյունավետության հոգեբանական գործոնները	Գիտական հոդված	ՀՖԿՍՊԻ, Գիտամեթոդա-կան պարբերական	2021	9
	Շախմատիստի անհատական առանձնահատկությունների դերը մրցակցային գործունեության ընթացքում	Գիտական հոդված	ԵՊՀ, Արդի հոգեբանութ-յան գիտական հանդես	2021	7
	Հոգեկան հուսալիության ապահովման յուրահատկությունները սպորտում	Գիտական հոդված	«ԲԱՆԲԵՐ ՀՊՏՀ» գիտական հանդես	2021	10
	Մարտական գործողությունների մասնակից զինվորների վարքի դրսևորման առանձնահատկությունները	Գիտական հոդված	ՀՊՄ, միջազգային գիտաժողովի նյութեր	2022	7
	Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ապագա մասնագետների մանկավարժական ընդունակությունների ձեվավորման դինամիկան	Գիտական հոդված	ՀՖԿՍՊԻ, Գիտամեթոդա-կան պարբերական	2022	9
	Սպորտային հոգեբանի գործունեության արդյունավետության արդի պահանջները	Գիտական հոդված	ՀՖԿՍՊԻ, Գիտամեթոդակ ան պարբերական	2024	10

Ա. Ստեփանյան	Հոգեբանության գիտահետազոտական մեթոդները սպորտում	ՈՒսումնամեթոդական ձեռնարկ	Եր.: Հեղ. հրատ.	2016	236
	Հոգեկարգավորման հիմնախնդիրները սպորտում	ՈՒսումնամեթոդական ձեռնարկ	Եր.: Հեղ. հրատ.	2012	162
	<<Մուայթայ մարզաձևի մարզիկների սթրեսակայունության և ինքնավերահսկիչ վարքի ձևավորման և դրսևորման առանձնահատկությունները>>	Գիտական հոդված	Եր.: Հեղ. հրատ.	2024	3
	Features of improving the process of in sports activities	Գիտական հոդված	ՀՖԿՍՊԻ, Գիտամեթոդա-կան պարբերական	2023	9
	Characteristics of building and demonstrating stress resistance and self-control in muay thai athletes	Գիտական հոդված	Proceedings 9th international conference ,,the current issues in theoretical and applied psychology,,	2023	4
Ն. Գևորգյան	Սպորտը և <<դժվար>> դեռահասների վարքի շտկումը	ՈՒսումնամեթոդական ձեռնարկ	Եր.: Հեղ. հրատ.	2021	88
Թ. Սոֆյան	Հոգեբանության գիտահետազոտական մեթոդները սպորտում	ՈՒսումնամեթոդական ձեռնարկ	Եր.: Հեղ. հրատ.	2016	236
	Հոգեկանոնավորման հիմունքները մարզիկի պատրաստության համակարգում	Մենագրություն	Եր.: Հեղ. հրատ.	2018	119
	Հոգեբանական աջակցության առանձնահատկությունները հետպատերազմյան ժամանակահատվածում	Գիտական հոդված	Հայաստան	2022	4
	«Հոգեկարգավորման մեթոդների ներդրման տեխնոլոգիան արևելյան մարտարվեստում»	Գիտական հոդված	Հայաստան	2024	10
Ա. Չատինյան	Ընտանեկան դաստիարակության հիմունքները	ՈՒսումնական ձեռնարկ	Եր.: Հեղ. հրատ.	2009	104
	The system of training of scientific-pedagogical personnel at ASIPCS: current status and prospects	Գիտական հոդված	матеріали X Міжнародної науково-практичної конференції	2022	3
Ա. Դավթյան	Պատանի ըմբիշների տեխնիկական հնարքների կատարելագործման մանկավարժական տեխնոլոգիան	ՈՒսումնամեթոդական ձեռնարկ	Եր.: Հեղ. հրատ.	2020	78
	The bases of technical training among young wrestlers in the multi-year process	Գիտական հոդված	Հյուսիսային համալսարան - հյուսիսափայլ	2023	8
	Ֆուտբոլիստների ստուգողական պահանջների թեստավորումը որպես ֆիզիկական պատրաստվածության	Գիտական հոդված	Մանկավ-արժական միտք	2023	6
Ե. Հակոբյան	Մեծահասակ ազգաբնակչության ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի հիմունքները	ՈՒսումնամեթոդական ձեռնարկ	Եր.: Հեղ. հրատ.	2011	248

Ա.Հարությունյան	Нейрогенетические процессы во время сна и бодрствования.	**Գիտական հոդված**	Вестник медицинского колледжа им. Меграбяна, том 13, изд-во «Мекнарк» с. 101-108 eLIBRARY.	2023	9
	Нейропсихологический подход социализации лиц во время и после тюремного заключения.	**Գիտական հոդված**	Вестник медицинского колледжа им. Меграбяна, том 14 изд-во «Мекнарк» с. 194-202 eLIBRARY. РИНЦ	2023	8
	Генетические причины формирования СПИДа.	**Գիտական հոդված**	Вестник медицинского колледжа им. Меграбяна, том 15, изд-во «Мекнарк» с. 72-78 eLIBRARY	2023	7
	Современное представление о вирусах и перспективы развития психолого-педагогических наук.	**Գիտական հոդված**	Вестник медицинского колледжа им. Меграбяна, том 15, изд-во «Мекнарк» с. 171-180 eLIBRARY	2023	10
	Строение и функции биокоммуникационной системы человека	**Գիտական հոդված**	Вестник медицинского колледжа им. Меграбяна, том 16, изд-во «Мекнарк» с. 164-171 eLIBRARY	2024	8
	Современная геронтология и вирусная теория старения	**Գիտական հոդված**	Вестник медицинского колледжа им. Меграбяна, том 16, изд-во «Мекнарк» с. 192-199	2024	9
Լ. Մեծոյան	Ինֆորմատիկա	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Եր.: Հեղ. հրատ.	2008	93

Աղյուսակ 8

3.7 Կրթական ծրագիրը սպասարկող պրոֆեսորադասախոսական կազմի մասնակցություն ՀՀ-ում կազմակերպված գիտաժողովներին, մրցույթներին, վերապատրաստման ծրագրերին և դասընթացներին (այդ թվում՝ մասնագիտական)				
Անուն, ազգանուն	Միջոցառման անվանումը,տեսակը	Քաղաքը	Ամիս, ամսաթիվ	Միջոցառման տևողությունը
Վ. Գեղամյան	<<Մասնագիտական կրթական ծրագրի որակի ապահովում>> վերապատրաստման դասընթաց	Երևան	2020	24 ժամ
	<<Միկրոմիմիկայի ճանաչում>> տեսագործնական դասընթաց	Երևան	2021	12 ժամ
	Մարզիչների վերապատրաստման դասընթաց	Երևան	2023	110 ժամ /8կրեդիտ/
Հ. Բաբայան	<<Հավատարմագրման ազդեցությունը բուհի բարելավման գործընթացում>> վերապատրաստման դասընթաց	Երևան	2021	6 ժամ
	<<Введение в психологическое консультирование>> թեմայով հեռավար դասընթաց	Մոսկվա	2023	12 ժամ
Թ. Սոֆյան	<<Դեպրեսիան մեր կյանքում, հաղթահարման ուղիները>> վերապատրաստման դասընթաց	Երևան	2023	16 ժամ
	<<PTSD>>, կորուստ, վիշտ համախտանիշների հետ հոգեբանական աշխատանքների առանձնահատկություններն ու մոտեցումները>> թեմայով դասընթաց	Երևան	2021	Մեկ ամսյա դասընթաց
	<<Эриксоновский гипноз>> վերապատրաստման հեռավար դասընթաց	Մոսկվա	2024	32 ժամ
Ա. Ստեփանյան	<<Ներածություն, փսիխոսոմատիկա, ախտորոշում և թերապիա>> վերապատրաստման դասընթաց	Երևան	2023	12 ժամ
	<<Спортивная психология>> վերապատրաստման դասընթաց	Մոսկվա	2022	72 ժամ
	<<Эриксоновский гипноз>> վերապատրաստման հեռավար դասընթաց	Մոսկվա	2024	32 ժամ
Ն. Գևորգյան	<<Web of Science>> հնարավորությունները գիտահետազոտական գործընթացում թեմայով հեռավար դասընթաց	Կիև	2023	12 ժամ
	<<Эриксоновский гипноз>> վերապատրաստման հեռավար դասընթաց	Մոսկվա	2024	32 ժամ
Ա. Չատինյան	<<Web of Science>> հնարավորությունները գիտահետազոտական գործընթացում թեմայով հեռավար դասընթաց	Կիև	2023	12 ժամ
	<<Erasmus+ PRINTel>>	Երևան	2023	15 ժամ
	<<Թեստաբանություն>> վերապատրաստման դասընթաց	Երևան	2023	30 ժամ
Ա. Հարությունյան	«Թեստաբանություն» (ՀՖԿՍՊԻ) գիտագործնական սեմինար	Երևան	2023	8 ժամ

Աղյուսակ 9

3.8 Գիտահետազոտական ծրագրերի շրջանակում (այդ թվում՝ դրամաշնորհային) իրականացված հետազոտությունները			
Ծրագրի անվանումը	Ժամկետը	Հետազոտողը /անուն, ազգանուն/	Ֆինանսավորման աղբյուրը և ծավալները
<<A Pilot Study. J. Functional Morphology and Kinesiology>> Բարձր վարկանիշ ունեցող գիտական շտեմարան /Scopus/	2022	Ա. Չատինյան	Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ
<<Health Problems of Civilization>> Բարձր վարկանիշ ունեցող գիտական շտեմարան /Web of Science/	2023	Ա. Չատինյան	Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ
<<Physikcal education theory and methodology>> Բարձր վարկանիշ ունեցող գիտական շտեմարան /Scopus/	2023	Վ. Գեղամյան	Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ

Աղյուսակ 10

3.9 Ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության վերաբերյալ ներկայացնել վերլուծություն			
Ծրագրի ուժեղ կողմերը		**Ծրագրի թույլ կողմերը**	
1.	Գիտահետազոտական աշխատանքների ուսումնասիրության և մեկնաբանության նորարար մոտեցումներ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ /բազմաֆունկցիոնալ համակարգչային ծրագրեր՝ Rehakor-T, Egoscop հոգեֆիզիոլոգիական ցուցանիշների ախտորոշման մեթոդների կիրառում, <<Հոգեախտորոշիչ բազմագործոն սարք>>-ի ներդնում գիտահետազոտական գործընթացներում և այլն/	1.	Գիտահետազոտական գործունեության միջազգայնացման և մագիստրանտների միջազգային շարժունության ապահովման գործընթացի ոչ լիարժեք կազմակերպում
2.	Ուսումնամեթոդական ձեռնարկների, դիդակտիկ, ուսումնաօժանդակ, տեսալսողական նյութերի ապահովվածություն, համակարգչային classroom, kahoot ծրագրերի կիրառում:	2.	Հոգեբանական ապահովում իրականացնելու նպատակով հատուկ պայմանների բացակայություն /թրեյնինգի սենյակ/
3.	Սպորտի հոգեբանի գիտագործնական հմտությունների ձևավորումը ոչ միայն սպորտում այլև գործունեության արտակարգ իրավիճակներում	3.	Ընթացիկ մարզումների և մրցումների, մարզական մասսայական միջոցառումների ուսումնագիտական այցերի պակաս և հոգեբանական գոռծառույթների իրականացման բացակայություն
4.	Կրթական ծրագիրը սպասարկող մասնագիտական բարձր որակավորում և	4.	Դասավանդվող առարկաների տեսական և լաբորատոր-գործնական դասերի ոչ

	գիտական աստիճաններ ունեցող պրոֆե-սորադասախոսական կազմի առկայություն		համաչափ բաշխվածություն
5.	Ուսումնական պրակտիկայի արդյունավետ իրականացում հանրապետության առաջադեմ հոգեբանական կենտրոններում և մարզամշակութային կենտրոններում	5.	Սպորտի հոգեբանության բնագավառի առանձին հիմնախնդիրներ ԿԾ-ում ներառված են որպես առարկաներ /օրինակ՝ <<Սպորտի սոցիալ-հոգեբանական հիմունքներ>>, <<Վարքի կառավարման հոգեբանություն>> և այլն/
Բարելավման հնարավորությունները			
1.	Արդիական լաբորատոր գործիքային հոգեախտորոշիչ սարքավորումներն ու համակարգչային բազմաֆունկցիոնալ ծրագրերի կիրառումը, ինստիտուտի <<ՍՊՈՐՏ ՔԱԲ>> գիտահետազոտական կենտրոնը և ամբիոնի կողմից իրականացվող գիտահետազոտական աշխատանքները խթանում են գիտահետազոտական նախագծերում մագիստրանտների ակտիվ ներգրավվածությունը		
2.	Համատեղ ուսումնագիտական գործունեությունը միավորում է դասախոս-մագիստրանտ-շահառու կողմերը		
3.	Առկա ուսումնական գրականության և մասնագիտական նյութերը նպաստում են որակյալ կրթության ապահովմանը		
4.	Լաբորատոր-գործնական դասերը խորացնում են մագիստրանտների ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքների իրականացման հմտություններն ու ձևավորում են համապատասխան դրդապատճառներ		
5.	Միջազգային որակավորման դասընթացների մասնակցություն, փորձի փոխանակում		
6.	Հոգեբանական կենտրոններում և մարզադպրոցներում իրականացվող ուսումնական պրակտիկաները խորացնում են սպորտային հոգեբանի մասնագիտական գիտագործնական հմտությունները		

Չափանիշ 4. Կրթական ծրագրի որակի բարելավման մեխանիզմները

Չափորոշիչ 4.1 ՄԿԾ շրջանակում գործում են մասնագիտության կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման ընթացակարգեր և մեխանիզմներ

4.1.1 ԿԾ–ն ունի որակի ապահովման մշակված մեխանիզմներ և պատասխանատու: ԿԾ-ի որակի ապահովման ամբիոնի պատասխանատու է հանդիսանում սպորտի հոգեբանության բնագավառում հանրապետական և միջազգային գիտագործնական մեծ փորձ ունեցող, սպորտի միջազգային փորձագետ, հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Հ.Ա. Բաբայանը: Ծրագիրի բոլոր դրույթներն իրականացվում է /գնահատում, քննությունների կազմակերպում, մագիստրանտի ինքնուրույն անհատական աշխատանքներ և այլն/ ամբիոնի և ինստիտուտի որակի բաժնի կողմից մշակված պահանջներով:
4.1.2 Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են ԿԾ–ի որակի ներքին ապահովման գործընթացներում: ԿԾ-ի որակի ներքին ապահովման գործընթացում ներգրավված են թե ներքին և թե արտաքին շահակից ընկերությունները, որոնց հետ փոխադարձ կապի արդյունքում պարբերաբար քննարկվում և համադրվում են ԿԾ-ում ի հայտ եկած խնդիրները: Արտաքին շահակից <<Հայաստանի հոգեբանների միություն>> ՀԿ-ի քննարկումների արդյունքում առաջարկվել է ԿԾ-ում ներդնել <<Արտակարգ իրավիճակների հոգեբանություն>> առարկան:

4.1.3 ԿԾ-ի շրջանակներում հետադարձ կապի մեխանիզմներով հավաքագրվում է իրականացվող կրթական գործընթացների մասին հավաստի տեղեկատվություն, որը վերլուծվում է ծրագրի բարելավման համար ի դեմս մարզիկների սպորտային պատրաստության գործընթացի արդյունավետության բարձրացման հարցերի շրջանակների:
4.1.4 ԿԾ-ի շրջանակներում իրականացվում է առաջավոր փորձի ուսումնասիրում և համեմատական վերլուծություն, որի արդյունքների հիման վրա կատարվում է կրթական ծրագրի համալրման աշխատանքներ՝ ներդնելով ԱՊՀ առաջատար երկրների ֆկ և սպորտային բուհերի առաջավոր փորձը /ՌԴ, Բելառուս, Ղազախստան և այլն/

4. ՄԿԾ միջազգայնացման ցուցանիշներ

Աղյուսակ 11

4.1 Միջազգային համագործակցային հնարավորություններ				
Ծրագրի անվանումը	Գործընկեր	Համագործակցության ձևը	Ժամանակաշրջանը	Մասնակից ուսանողներ /Ա.Ա.Հ/
Ուսումնական պրակտիկայի փոխադարձ այցելություններ և համագործակցություն	Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջազգային ասոցիացիայի անդամ բուհեր	Արտերկրյա և ՀՀ մագիստրանտների շարժունության ապահովում	2025-2030	3-5 առաջադեմ լեզվի իմացությամբ մագիստրանտներ

Աղյուսակ 12

4.2 ԿԾ ուսանողի արտագնա շարժունություն				
Ուսանող /Ա.Ա.Հ./	Շարժունության երկիրը	Շարժունության բուհը	Արդյունքը	Ժամկետը
Մերի Դավթյան	Հունաստան	Միջազգային օլիմպիական ակադեմիա	64-րդ միջազգային նստաշրջան	8.07-21.07.2024թ.

Աղյուսակ 13

4.3 ԿԾ–ում ուսանողի ներգնա շարժունություն				
Ուսանող /Ա.Ա.Հ./	Շարժունության երկիրը	Շարժությության բուհը	Արդյունքը	Ժամկետը
-	-	-	-	-

Աղյուսակ 14

4.4 ԿԾ–ի ակադեմիական արտագնա շարժունություն				
ՊԴ անդամ /Ա.Ա.Հ./	Շարժունության երկիրը	Շարժությության բուհը	Արդյունքը	Ժամկետը
-	-	-	-	-
4.5 ԿԾ–ՈՒՄ ակադեմիական ներգնա շարժունություն				
ՊԴ անդամ / Ա.Ա.Հ./	Շարժունության երկիրը	Շարժությության բուհը	Արդյունքը	Ժամկետը

-	-	-	-	-

Աղյուսակ 16

4.6 Միջազգային գործունեության վերաբերյալ ներկայացնել վերլուծություն			
Ծրագրի ուժեղ կողմերը		Ծրագրի թույլ կողմերը	
1.	Մագիստրանտը ձեռք բերած տեսական և գործնական գիտելիքների շնորհիվ կարող է արդյունավետ հոգեբանական սպասարկման համեմատական գործառույթներ իրականացնել արտերկրների փորձի և տեխնոլոգիաների ներդրմամբ	1.	Լեզվի իմացության ցածր մակարդակ
2.		2.	Միջազգային համագործակցության փորձի պակաս
Բարելավման հնարավորությունները			
1.	Օտար լեզուներին տիրապետող մագիստրանտների ակտիվ ներգրավվածության ապահովում ուսումնագիտական գործընթացում		
2.	Արտերկրյա մարզական և կրթական ոլորտների հոգեբանական առաջավոր մասնագետների փորձի փոխանակում		

Աղյուսակ 17

4.7 Որակի ապահովման գործընթացների վերաբերյալ ներկայացնել վերլուծություն			
Ծրագրի ուժեղ կողմերը		Ծրագրի թույլ կողմերը	
1.	Սպորտի հոգեբանության ոլորտում մասնագիտական հարուստ փորձ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմի առկայություն	1.	Մասնագիտական կառուցամասի առանձին առարկաների բովանդակային նմանություն և կրկնության փաստեր
2.	Ժամանակակից բարձր ճշգրտության տեխնոլոգիաների և մեթոդիկաների ներդնումը ուսումնագիտկան գործընթացում	2.	Արտալսարանային դասընթացներին հատկացված ժամերի և թեմաների շեշտադրման բացակայություն
3.	Հոգեախտորոշման մեթոդների ինքնուրույն ընտրելու, հետազոտություն իրականացնելու և հոգեբանական խորհրդատվություն կազմակերպելու հնարավորությունները	3.	Առարկայական որոշ ծրագրերում տեսական ժամերի գերակշռում
Բարելավման հնարավորությունները			
1.	Կրթական ծրագրում սպորտի հոգեբանի գործնական ոլորտին ներկայացվող ժամանակակից պահանջներին համապատասխան առարկաների ներդնումը կնպաստեն կրթության որակի բարելավմանը:		
2.	Ուսուցման իրականացումը անհրաժեշտ է իրականացնել <<տեսականի և գործնականի միասնականության>> սկզբունքի պահանջներով: Տեսական գիտելիքները կիրառել գիտահետազոտական, գիտամեթոդական, գիտամանկավարժական, կառավարման-կազմակերպչական գործընթացներում		

Ընդհանուր եզրակացություն կրթական ծրագրի մշտադիտարկման վերաբերյալ

«Հոգեբանություն» կրթական ծրագիրն իր ներդրման ուսումնական տարվանից /2016թ/ ի վեր մշտապես հանդիսացել է մշտադիտարկման օբյեկտ հետևյալ գործառույթներով.

- Հավաքագրվել ու քննարկվել են ԿԾ-ում դասավանդող բոլոր դասախոս-մասնագետների կարծիքներն ու առաջարկությունները:
- Իրականացվել է ծրագրի վերաբերյալ հանրապետության առաջատար բուհերի մասնագիտական ամբիոնների, գիտական խորհուրդների և շահակից կազմակերպությունների մասնագիտական կարծիքների ուսումնասիրություն և անհրաժեշտ առաջարկությունների ներդրում, դիտողությունների շտկում:
- Ներդրվել է սովորող մագիստրանտների առաջարկները, լրացուցիչ պահանջներն ու գործառույթները:
- Իրականացվել է պրակտիկայի պահանջներին համապատասխան ծրագրային և բազաների փոփոխություններ:
- Ավելացել և փոփոխվել է դասավանդվող առարկաների տեսական և գործնական ժամերի հարաբերակցությունը:
- Տարեցտարի բարձրացել է գիտական թեզերի կատարման և ներկայացման պահանջներն ու տեխնոլոգիաները:
- Խորացվել է կապը ինստիտուտի «Սպորտ ՔԱԲ» գիտահետազոտական կենտրոնի հետ:

Այսքանով հանդերձ ԿԾ-ում տեղ գտած որոշ թերությունների շտկումը, մի շարք առարկայական փոփոխություններն ու մասնագիտական պրակտիկայի ծրագրի լրամշակումը հնարավորություն կընձեռեն լիարժեք իրականացնելու ՄԿԾ-ի վերջնարդյունքները, կբարձրացնեն ուսման որակը, կապահովեն արտաքին շահակից ընկերությունների և ընդհանուր շուկայի պահանջները:

5. Ընդհանուր եզրակացություն կրթական ծրագրի մշտադիտարկման վերաբերյալ

(ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ)

1. Մշտադիտարկումն իրականացվել է հաստատված ձևաչափին համապատասխան՝ չնայած առաջին փորձով պայմանավորված առկա է վերլուծական մոտեցման պակաս:
2. Բավականին թիրախավորված են իրականացվել SWOT վերլուծությունները: Բայց ընդհանուր առմամբ ՄԿԾ ինքնավերլուծությունն իրականացվել է հիմնականում առանց խնդիրների վերհանման վրա կենտրոնանալու:
3. Ինքնավերլուծության չափանիշներում ներկայացված տեղեկատվությունը հիմնականում ներկայացնում է ՄԿԾ ուժեղ կողմերը:
4. Աղյուսակներում ներկայացված ցուցանիշները կարևոր տեղեկատվություն են ապահովում կրթական ծրագրի վերաբերյալ, սակայն այդ ցուցանիշների դինամիկան համեմատական չի վերլուծվել և փոխկապակցվել հետագայում ուժեղ կամ թույլ կողմերի հետ:
5. Չնայած նրան, որ ինքնավերլուծության մեջ ունենք «ԿԾ-ում առկա են դասավանդվող բոլոր առարկաների նկարագրերը, դասընթացների ծրագրերը, որոնք համապատասխանում են ԿԾ-ում սահմանված վերջնարդյունքներին» կետ, սակայն վերջնարդյունքների վերաբերյալ ուսումնասիրություններ և դիտարկումներ չեն արվել: Մասնավորապես, արդյո՞ք ՄԿԾ վերջնարդյունքները համապատասխանում են մասնագետի պահանջներին, չկա՞ արդյոք դրանց վերանայման կարիք, դասընթացների վերջնարդյունքներն ապահովո՞ւմ են արդյոք ՄԿԾ վերջնարդյունքները և այլն:
6. Ընդհանուր առմամբ կատարված մշտադիտարկումը կարևոր քայլ և ձեռքբերում է ՄԿԾ արդյունավետության գնահատման և հետագա ավելի խորացված վերլուծությունների համար: